



ԱԳՐՈՂՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
 Հայաստանի ազգային ագրարային համալսարան
 AGRISCIENCE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական
պարբերական

ISSN 2579-2822



Կայքէջ՝ anau.am/scientific-journal

doi: [10.52276/25792822-2022.3-244](https://doi.org/10.52276/25792822-2022.3-244)

ՀՏԴ 631.15:634.8

ՀՀ ԽԱՂՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ա.Ե. Ոսկանյան տ.գ.թ., Ա.Յ. Հարությունյան տ.գ.թ.

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

ashot.voskan@gmail.com, armanhar@list.ru

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բանալի բառեր՝
խաղողագործական տնտեսություններ, դասակարգում, արդյունավետություն, խնդիրներ, լուծման ուղիներ

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Գյուղատնտեսության ճյուղերի, այդ թվում՝ խաղողագործության զարգացման բաղաբաժանությունը հիմնականում պայմանավորված է ոլորտում գործող տնտեսությունների դասակարգվածությամբ, դրանց գործունեության վերաբերյալ տեղեկատվության ամփոփությամբ և բնորոշ խնդիրների վերահամարմբ:

Ուսումնասիրությունների և կատարված հաշվարկների հիման վրա հողվածում ներկայացվել են Հայաստանում գործող խաղողագործական տնտեսությունների դասակարգման մոտեցումները, տնտեսական գործունեության վերլուծությունը, փաստացի տնտեսական արդյունավետությունը, ամփոփ խնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները:

Նախաբան

Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորները, ըստ գործունեության ոլորտների և մի շարք այլ չափանիշների, տարբեր են: Դրանցից յուրաքանչյուրի խնդիրները բացահայտելու և լուծումներ առաջադրելու համար կարևոր նախադրյալներից է վերջիններիս դասակարգման իրականացումը:

Հարկ է նշել, որ արտադրական միավորները, ըստ ընդհանրությունների, դասակարգվում են առանձին խմբերի կամ տեսակների (www.agriinfo.in):

Գյուղատնտեսական արտադրություն ապահովող միավորները կարող են դասակարգվել ըստ տնտեսությանը պատկանող հողատարածքի, կատարված ներդրումների կամ ստացվող եկամուտների, կիրառվող տեխնիկական միջոցների, արտադրված արտադրանքի իրացվելիության մակարդակի, ապրանքային արտադրանքի կառուցվածքի և այլն (Tamás Kismányoky, et al., 2016):

Օրինակ՝ Մակեդոնիայում գյուղատնտեսական արտադրական միավորները, ըստ տարեկան եկամտի, դասակարգվում են 14 խմբի, որոնցից 1-ինում ներառվում են տարեկան մինչև 1999 եվրո, 14-րդում՝ 300 հազար եվրոյից ավելի եկամուտ ունեցող միավորները: Ըստ տնտեսությունների հողատարածքների զբաղեցրած ընդհանուր մակերեսի՝ դասակարգվում են 7 խմբի՝ մինչև 0,5, 0,5-1,0, 1-3, 3-5, 5-8, 8-10, 10 և ավելի հեկտար հողատարածք ունեցող տնտեսություններ (www.stat.gov.mk):

Եվրոստատի համաձայն՝ խաղողագործական տնտեսությունները դասակարգելիս հիմք են ընդունվում այգու պտղատու կամ ոչ պտղատու լինելը, զբաղեցրած մակերեսը, մասնագիտացման աստիճանը, խաղողի հիմնական սորտը: Ըստ այգու ընդհանուր մակերեսի՝ խաղողագործական տնտեսությունները դասակարգվում են 7 խմբի՝ մինչև 0,10 հա, 0,10-0,49, 0,50-0,99, 1-2,9, 3-4,9, 6,5-9,9, 10 և ավելի հեկտար այգի ունեցող տնտեսություններ (www.ec.europa.eu):

Հայաստանում խաղողագործության ոլորտում աշխատանքների կազմակերպման, միջոցառումների հաջորդականության, խաղողի արժեզրեայում փոխհարաբերությունների և ընդհանրապես կառավարելիության արդյունավետությունը համեմատաբար բարձր է: Ընդ որում՝ տնտեսությունների դասակարգումը կարող է առավել նպաստավոր պայմաններ ապահովել պետական աջակցություն, հաշվառում և այլ կանոնակարգումներ իրականացնելիս:

Նյութը և մեթոդները

Հայաստանում ձևավորված խաղողագործական տնտեսությունների տնտեսական գործունեության արդյունավետությունը գնահատելուց առաջ ուսումնասիրվել է տնտեսությունների դասակարգման միջազգային, մասնավորապես եվրոպական փորձը: Դասակարգում կատարելիս հիմք է ընդունվել նաև 2014 թվականին Հայաստանում գյուղատնտեսական համատարած հաշվառման ժամանակ կիրառված մեթոդիկան: Արդյունքում խաղողագործական տնտեսությունները դասակարգվել են 5 խմբի և պայմանականորեն անվանվել գերփոք, փոքր, միջին, խոշոր և գերխոշոր:

Ուսումնասիրվել են ֆիզիկական անձի կարգավիճակ ունեցող (գյուղացիական) տնտեսությունները, քանի որ դրանք ապահովում են խաղողի համախառն բերքի 98,1 %-ը (Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2021):

Կիրառվել են ուսումնասիրության ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մասնագիտական մեթոդներ: Խաղողագործական տնտեսությունների տնտեսական գործունեության արդյունավետությունը գնահատելու համար ուսումնասիրություններին զուգահեռ կատարվել են նաև հարցումներ: Վերջիններս հիմնականում իրականացվել են առանձին խմբերում ընդգրկված տնտեսություններում՝ խաղողի ինքնարժեքը հաշվարկելու, ինչպես նաև տնտեսական գործունեությանը խոչընդոտող գործոնները բացահայտելու նպատակով: Արդյունքում խաղողի փաստացի ինքնարժեքը հաշվարկվել է ըստ առանձին խաղողագործական տարածաշրջանների և ուսումնասիրվող հինգ խմբերի:

Արդյունքները և վերլուծությունը

Խաղողագործական տնտեսություններն ուսումնասիրվել են ըստ այգու մակերեսի (հա), տարեկան հաշվարկային եկամտի (հազ. դրամ), աշխատանքի և կապիտալ ներդրումների, նորարարական տեխնոլոգիաների կիրառման, ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքի, առևտրայնացման աստիճանի և այլն: Հնգամակարդակ դասակարգումը կատարվել է տնտեսություններին պատկանող այգետարածքի զբաղեցրած մակերեսի և հաշվարկային եկամուտների հիման վրա (աղ. 1):

Հետխորհրդային ժամանակահատվածում խաղողագործության վարման թերևս հիմնական առանձնահատկությունը՝ այգետարածքների զբաղեցրած փոքր մակերեսը,


պայմանավորված է կազմակերպատնտեսական և կառավարման ոչ ստանդարտ մոտեցումներով: Գերփոք, այսինքն՝ մինչև 0,1 հա խաղողի այգետարածքներ ունեցող տնտեսությունները բավական մեծ թիվ են կազմում (շուրջ 7850) Արարատյան հարթավայրում և դրա նախալեռնային գոտում: Այդ տնտեսությունները հիմնականում նեղ մասնագիտացված չեն, վարում են մասամբ էքստենսիվ բնատնտեսություն և գրեթե դերակատարություն չունեն խաղողի շուկայում: Բոլոր գոտիներում էլ գերակշռում են միջին և փոքր տնտեսությունները:

Գծապատկեր 1-ում ներկայացված են հիմնական խաղողագործական գոտիների տարբեր խմբերի տնտեսությունների տեղաբաշխվածությունն ըստ զբաղեցրած մակերեսի: Վայոց ձորում փոքր տնտեսությունները կազմում են խաղողի ընդհանուր այգետարածքների 13 %-ը: Թվաքանակի առումով դրանք բավական շատ են Արարատյան հարթավայրում և դրա նախալեռնային գոտում, սակայն կազմում են խաղողի ընդհանուր այգետարածքների ընդամենը 11 %-ը:


Աղյուսակ 1. Խաղողագործական տնտեսությունների թիվն ըստ այգու ընդհանուր մակերեսի և հաշվարկային տարեկան եկամտի*

Տնտեսություններն ըստ դասակարգման	Տնտեսությունների թիվը, միավոր		
	Արարատյան հարթավայր և դրա նախալեռնային գոտի	Վայոց ձորի խաղողագործական գոտի	Գյումրիի և Երևանի խաղողագործական գոտի
Գերփոք <i>(մինչև 0,10 հա այգետարածք և տարեկան մինչև 249 հազ. դրամ հնարավոր եկամուտ)</i>	7850	460	868
Փոքր <i>(0,10-0,49 հա այգետարածք և տարեկան 250-1499 հազ. դրամ եկամուտ)</i>	11420	1261	1708
Միջին <i>(0,5-2,99 հա այգետարածք և տարեկան 1500-7499 հազ. դրամ եկամուտ)</i>	24136	2363	7562
Խոշոր <i>(3,0-9,99 հա այգետարածք և տարեկան 7500-24999 հազ. դրամ եկամուտ)</i>	1601	342	476
Գերխոշոր <i>(10 հա և ավելի այգետարածք, տարեկան 25000 հազ.դրամ և ավելի հնարավոր եկամուտ)</i>	192	12	25

*Կազմվել է հեղինակների կողմից՝ ըստ սեփական ուսումնասիրությունների և ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքների», 2016:



Գծ. 1. Խաղողի այգետարածքների տեղաբաշխվածությունն ըստ խմբային դասակարգման:*



Գծ. 2. Խաղողագործական տնտեսությունների դասակարգումն ըստ խաղողի ապրանքայնության:*

*Կազմվել են հեղինակների կողմից՝ ըստ սեփական ուսումնասիրությունների և ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքների», 2016):

Ըստ ընդհանուր զբաղեցրած մակերեսի՝ երեք գոտիներում էլ գերակշռում են միջին խաղողագործական տնտեսությունները: Հյուսիսարևելյան գոտում դրանք կազմում են ընդհանուր այգետարածքների 80 %-ը:

Բոլոր գոտիներում գերիշխող տնտեսությունները, ըստ զբաղեցրած ընդհանուր մակերեսի, կազմում են 1-2 %: Դրանք հիմնականում ժամանակակից ինտենսիվ տեխնոլոգիաներով հագեցած տնտեսություններ են:

Ըստ խաղողի բերքի ապրանքայնության՝ տնտեսությունները դասակարգվել են 4 խմբի՝ միայն սեփական սպառման, հիմնականում սեփական սպառման, հիմնականում վաճառքի և միայն վաճառքի համար խաղող արտադրողներ (գծ. 2):

Գծապատկեր 2-ի համաձայն՝ գրեթե բոլոր մարզերում բավական մեծ տեսակարար կշիռ են կազմում ներտնտեսային սպառման խաղողագործական տնտեսությունները: Սակայն հարկ է նշել, որ խաղողից պատրաստվող գինին կամ օղին վերջին հաշվով իրացվում է՝ ապահովելով եկա-

մուտ: Առավել մեծ տեսակարար կշիռ են կազմում այն տնտեսությունները, որոնք հիմնականում վաճառքի նպատակով են զբաղվում խաղողի մշակությամբ:

Աղյուսակ 2-ում ներկայացված են ուսումնասիրությունների հիման վրա պայմանականորեն դասակարգված տնտեսությունների արդյունավետության ցուցանիշները:

Գնային գործոնի ազդեցությունը բացառելու համար խաղողագործական տնտեսությունների տնտեսական արդյունավետությունը հաշվարկվել է ըստ խաղողի վաճառքի միջինացված գնի: Տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնական նախադրյալ պետք է դիտարկել խաղողագինեգործական կոոպերատիվների (Ա. Հարությունյան, 2014) և կլաստերների ձևավորումը (Ա. Ոսկանյան և ուրիշ., 2021):

Կոոպերացման և կլաստերացման նպատակահարմարությունը որոշելու համար ուսումնասիրվել է ամերիկյան և եվրոպական փորձը (Rolf A.E. Mueller and Daniel A. Sumner, 2016):

Աղյուսակ 2. Խաղողի արտադրության տնտեսական արդյունավետությունը տարբեր տնտեսություններում (2017-2021 թթ. միջինացված ցուցանիշները)*

Խաղողագործական գոտիներ	Տնտեսությունների ըստ դասակարգման	1 կգ խաղողի ինքնաթեփը, դրամ	1 կգ խաղողի վաճառքի գինը, դրամ	1 կգ խաղողի ապահոված շահույթը կամ վնասը, դրամ	Խաղողի վաճառքի ծավալը, հազ. տ	Խաղողի վաճառքից հնարավոր ընդամենը շահույթը կամ վնասը, մլն դրամ	Շահութաբերության մակարդակը, %
Արարատյան հարթավայր և դրա Նախալեռնային գոտի	Գերփոքր	148,7	167	18,3	1,7	31,11	12,3
	Փոքր	142,5		24,5	18,8	460,6	17,2
	Միջին	123,9		43,1	116,3	5012,5	34,8
	Խոշոր	122,7		44,3	25,6	1134,1	36,1
	Գերխոշոր	93,4		73,6	8,5	625,6	78,8
Վայոց ձոր	Գերփոքր	156,3	167	10,7	0,1	1,07	6,8
	Փոքր	150,1		16,9	0,6	10,14	11,2
	Միջին	130		37	2,9	107,3	28,5
	Խոշոր	121,8		45,2	0,5	27,12	37,1
	Գերխոշոր	119,2		47,8	0,1	4,78	40,1
Յյուսիսարևելյան գոտի	Գերփոքր	159,1	167	7,9	0,1	0,79	4,9
	Փոքր	154,3		12,7	0,5	6,35	8,2
	Միջին	145,8		21,2	5,1	108,12	14,5
	Խոշոր	128,4		38,6	0,6	23,16	30,1
	Գերխոշոր	125,7		41,3	0,1	4,13	32,8

*Կազմվել է հեղինակների կողմից՝ ըստ սեփական ուսումնասիրությունների և ՀՀ ՎԿ Տեղեկատվական ամսական զեկույցի, 2020:

Ծանոթություն. խաղողի վաճառքի ծավալները և ընդամենը հաշվարկային շահույթը հաշվարկվել են տվյալ խմբում ընդգրկված բոլոր տնտեսությունների համար:

Եզրակացություն

Ուսումնասիրությունների և կատարված հաշվարկների համաձայն՝ տնտեսական արդյունավետությունը համեմատաբար բարձր է Արարատյան հարթավայրի և դրա Նախալեռնային գոտու խաղողագործական տնտեսություններում, ինչը պայմանավորված է սորտային առանձնահատկություններով, կիրառվող արդի ագրոտեխնիկայով, տնտեսությունների մասնագիտացմամբ և այլն: Տնտեսական արդյունավետության բավական մոտ ցուցանիշներ են գրանցվել գերփոքր և փոքր, միջին և խոշոր տնտեսությունների միջև: Հատկանշական է, որ տնտեսական արդյունավետության տեսանկյունից միջին խաղողագործական տնտեսությունները միջանկյալ դիրք են գրավում գերփոքր, փոքր, խոշոր և գերխոշոր տնտեսությունների շարքում: Ընդ որում՝ տնտեսական բարձր արդյունավետության Նախադրյալներից մեկը տնտեսությունների մասնագիտացվածությունն է, ինչը հնարավորություն է տալիս գիտականորեն հիմնավորված մեթոդներով իրականացնել ագրոտեխնիկական միջոցառումները, լուծել արտադրանքի իրացման խնդիրները և այլ կազմակերպական հարցեր:

Գերփոքր և փոքր տնտեսությունների համեմատությամբ միջին և խոշոր տնտեսություններում հաշվարկային շահութաբերությունը, ըստ միջինացված ցուցանիշների, շուրջ 2,5 անգամ բարձր է:

Տնտեսական արդյունավետության տեսանկյունից Վայոց ձորի խաղողագործական տնտեսությունները զիջում են Արարատյան հարթավայրի և դրա Նախալեռնային գոտու տնտեսություններին, սակայն Յյուսիսարևելյան գոտու խաղողագործական տնտեսությունների համեմատությամբ գործում են ավելի արդյունավետ: Խմբերում հիմնականում օրինաչափորեն կրկնվում են Արարատյան հարթավայրի և դրա Նախալեռնային գոտու տնտեսություններում գրանցված տնտեսական արդյունավետության տարբերությունները: Ուշագրավ է, որ տնտեսական արդյունավետության ցուցանիշներով մոտ են խոշոր և գերխոշոր տնտեսությունները:

ՀՀ խաղողագործության վարման տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնական ուղիներից է ինտեգրված և կոոպերացված գործելաճճի կիրառումը: Առանձին խմբերի տնտեսություններում առկա խնդիրների լուծման համար անհրաժեշտ է Նաև ծավալել համագործակցություն:

Գերփոքր և փոքր խաղողագործական տնտեսությունների համար արդյունավետ կլինի Նպատակային սուբսիդավորման և սպառողական կոոպերատիվների ձևավորման պրակտիկայի կիրառումը: Ընդ որում՝ սպառողական կոոպերատիվները պետք է Նպաստեն խաղողի արժեչրթայում իրացման օպտիմալացմանը, ինչը մի կողմից հնարավորություն կտա տնտեսություններին մոտիվացվել և

բարձրացնել խաղողի ապրանքայնության մակարդակը, մյուս կողմից վերամշակողները չեն խուսափի համագործակցել փոքր ծավալով խաղող իրացնող բազմաթիվ տնտեսավարողների հետ, քանի որ հնարավորություն է ընձեռվում գործունեություն ծավալել միավորված կողմի հետ և հաստատել պայմանագրային երկկողմ կարգավորիչ հարաբերություններ:

Միջին և խոշոր խաղողագործական տնտեսությունների համար արդյունավետություն կապահովեն սուբսիդավորման ու պետական կարգավորման հասցեական մոտեցումները: Մասնավորապես արտադրական կոոպերացման կիրառումը հնարավորություն կտա արտադրությունը կազմակերպել առավել խոշոր մակերեսներում, բարձրացնել մեքենայացման մակարդակը, ներգրավել լրացուցիչ աշխատուժ և ֆինանսական ռեսուրսներ:

խոշոր տնտեսությունների դեպքում նպատակահարմար է կիրառել պայմանագրային կոոպերացիայի տարբերակը, ինչը հնարավորություն կտա առանձին խաղողագործական և գինեգործական տնտեսություններին համագործակցել, հանդես գալ մեկ միասնական բրենդով, արդյունավետ արտադրական և մարկետինգային գործունեություն ծավալել շուկայում:

խաղողագործական տարածաշրջաններում առաջնային արտադրական միավորների հիմնախնդիրների լուծման և ճյուղի կայուն զարգացման հնարավորությունների ստեղծման տեսանկյունից հեռանկարային կարող է լինել կլաստերացման զարգացումը: Խաղողագինեգործական կլաստեր նախագծելիս որպես միջուկ կարող են հանդես գալ խաղողի մշակությամբ զբաղվող մասնագիտացված ֆերմերային տնտեսությունները, ինչպես նաև առաջատար վերամշակող կազմակերպությունները: Սողելը պետք է ապահովի պետական կառույցների, գիտակրթական հաստատությունների, ներդրումներ կատարողների, միջազգային կազմակերպությունների և ագրարային ոլորտին առնչվող այլ սուբյեկտների ակտիվ ու շահագրգիռ համագործակցություն:

Ներկայացված առաջարկություններից յուրաքանչյուրն առավել խորը գիտական հիմնավորման նպատակով պետք է համակողմանի քննարկվի և գործնականում փորձարկվի: Պետք է հիմք ընդունել, որ ինչպես խաղողագործությունում, այնպես էլ ողջ ագրոպարենային համակարգում միայն բազմաթափ քաղաքականության իրականացումը կարող է ապահովել արդյունավետ զարգացում:

Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017-2021 թվականի հունվար-դեկտեմբերին: Գներ և սակագներ բաժին: Տեղեկատվական ամսական զեկույց: ՀՀ ՎԿ, Երևան, 2020:
2. Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2016. <https://armstat.am/am/?nid=82&id=1860> (դիտվել է՝ 29.05.2022 թ.):
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք: Գյուղատնտեսություն, 2021. <https://armstat.am/file/doc/99526883.pdf> (դիտվել է՝ 12.06.2022 թ.):
4. Հարությունյան Ա. Գինեգործական կոոպերատիվները որպես Գերմանիայի գինեգործական արդյունաբերության կարևորագույն բաղադրամաս, Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ // Գիտական աշխատանքների ժողովածու. - Գիրք 6. - Եր., 2014. - Էջ 36-50:
5. Ոսկանյան Ա., Մնացականյան Կ., Ղազարյան Մ. Կլաստերիզացիան որպես ՀՀ պտուղ բանջարեղենի արժեշղթայի կատարելագործման միջոց // Հայկական տնտեսագիտական հանդես. - N 1. - Եր., 2021. - Էջ 188-204. <https://arar.sci.am/dlibra/publication/307252/edition/282139/content>.
6. Classification of Farming Systems. My Agriculture Information Bank. <https://agriinfo.in/classification-of-farming-systems-632/> (դիտվել է՝ 29.05.2022 թ.):
7. European Commission Eurostat Directorate E: Sectoral and Regional Statistics Unit E-1: Agriculture and Fisheries, Eurostat Handbook for Structural Statistics on Vineyards (Regulation (EU) No 1337/2011, Annex II) Reference year 2015. https://ec.europa.eu/eurostat/cache/metadata/Annexes/vit_esms_an1.pdf (դիտվել է՝ 29.05.2022 թ.):
8. Rolf, A.E., Mueller and Daniel, A. Sumner (2006). Clusters of Grapes and Wine, Conference Draft, Revised May 22, 2006, Presented at the Third International Wine Business Research Conference Montpellier, France, July 6-8. <https://www.researchgate.net/publication/241283432> (դիտվել է՝ 01.06.2022 թ.):
9. Structure and Typology of Agricultural Holdings, State Statistical Office of the Republic of Macedonia, 2016. https://www.stat.gov.mk/PrikaziPoslednaPublikacija_en.aspx?id=79 (դիտվել է՝ 29.05.2022 թ.):
10. Tamás Kismányoky, Tamás Hermann, Brigitta Tóth, Gergely Tóth, Oihane Fernandez-Ugalde, Minggang Xu, Wang Fei, Thomas Caspari, Zhanguo Bai, Xiaodong Song (2016). Classification of Farming Systems across Europe and China, March. <https://ec.europa.eu/research/participants/documents/downloadPublic?documentIds=080166e5b1171fec&appId=PPGMS> (դիտվել է՝ 29.05.2022 թ.):

Классификация виноградарских хозяйств РА и анализ эффективности их экономической деятельности

А.Е. Восканян, А.Г. Арутюнян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: *виноградарские хозяйства, классификация, эффективность, проблемы, пути решения*

А н н о т а ц и я . Политика развития отраслей сельского хозяйства, в том числе виноградарства, в основном определяется классификацией действующих в отрасли хозяйств, наличием информации об их деятельности и выделением типичных проблем.

На основании исследований в статье представлены подходы к классификации виноградарских хозяйств Армении, анализ их хозяйственной деятельности, ее фактическая экономическая эффективность, существующие проблемы и возможные пути их решения.

Classification of Viticultural Farms and Analysis of their Economic Efficiency in the RA

A.Ye. Voskanyan, A.H. Harutyunyan

Armenian National Agrarian University

Keywords: *viticultural farms, classification, efficiency, problems, solution ways*

Abstract. Policy development in the agricultural branches, including viticulture, is mostly due to the classification of the current farms, availability of information on their activities, as well as to the identification of their specific problems.

Based on the conducted investigations, classification approaches of the current viticultural farms in Armenia, analysis of their economic activities, actual economic efficiency, current problems and their solution ways have been introduced in the article.

*Ընդունվել է՝ 17.06.2022 թ.
Գրախոսվել է՝ 13.07.2022 թ.*